ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլոգիական գիտ. XII, № 10, 1959 Биологические науки

ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ա. Ա. ԼԱԼԱՅԱՆ

«ՎՐԱՉ» ՀԱՆԴԵՍԸ ԵՎ ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐՆ ՈՒ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Վրաչ» բժշկական հանդեսը հրատարակվել է Պետերբուրգում 1880—1901 թվականներին, պրոֆ. Վ. Ա. Մանասեինի խմբագրությամբ։ Այն հանդիսացել է կլինիկական բժշկության, հիգիենային և բժշկական կենցաղին նվիրված, ռուս բժիշկների կողմից շատ ու շատ սիրված պարբերական հրատարակություն։

«Ռուս բժիշկների խիղճը» — այսպես է բնութագրվել «Վրաչ»-ը ժամանակակիցների կողմից։ Դժվար է գերագնահատել այն հսկայական դաստիարակչական դերը, որ խաղաց «Վրաչ»-ը ռուս բժշկության կյանքում։ Դրան հավասարը չի եղել և ոչ մի ժողովրդի բժշկության ասպարեզում։

Իր գոյության 21 տարիների ընթացքում իր էջերում, մասնավորապես «Խրոնիկա և մանր լուրեր» բաժնում, «Վրաչ»-ը առաջ քաշեց և լուծեց բժշկական կյանքի բոլոր փաբբիշառն կարևոր հարցերը։ Վերահիշյալ բաժնում զետեղված նյութերը դաստիարակչական հսկայական նշանակություն ունեին, դրանք դաստիարակության դպրոց էին, բժշկի բարոյականության կոդեքս, սինդիկ փայլուն կոդեկս, որպիսին չէր ունեցել և ոչ մի բժշկական հանդես։

«Վրաչ»-ի էջերում հրատարակվել են հայտնաբերվոր գիտական հոդվածներ, որոնցից շատերը իրենց արժեքը պահպանում են նաև այսօր։

«Վրաչ»-ը XIX դարի 80-ական և 90-ական թվականների ռուսական բժշկական կյանքի յուրահատուկ հանրագիտարանն է, նրա բժշկության պատմության հավերժ կենդանի հուշարձանը։

«Վրաչ»-ի յուրաքանչյուր համարի սկզբում զետեղվում էին կլինիկական բժշկության բոլոր բնագավառներին, հիգիենայի և բժշկական կենցաղի հարցերին նվիրված օրիգինալ հոդվածներ։

*Ինչպես որ «Վրաչ»-ի խմբագիր պրոֆ. Վ. Ա. Մանասեինը իր կլինիկայում սիրահոժար և առանց խտրության ընդունում էր Ռուսաստանի տարբեր ժողովուրդների ներկայացուցիչներին, այդ թվում նաև հայ բժիշկներին, այնպես էլ իր խմբագրած «Վրաչ»-ի էջերում տեղ էր տալիս այդ ժողովուրդների զավակների աշխատություններին, ինչպես նաև հայ բժիշկների կլինիկական հետազոտություններին։ «Վրաչ»-ի էջերում հանդես է եկել հայ ականավոր բժիշկ Մ. Ի. Առուստամովը։ Նրա հոդվածները հրատարակվել են 1891 և 1898 թվականներին։ Բացի ձկան թույնի ինֆեկցիոն բնույթին վերաբերող նշանավոր աշխատություններից, «Վրաչ»-ում հրատարակվել է նաև Մ. Ի. Առուստամովի մի այլ աշխատությունը «*Leptothrix*-ի մորֆոլոգիայի և բիոլոգիայի մասին» խորագրով, որպիսի աշխատանքը կատարված է եղել պրոֆ. Մ. Ի. Աֆանասևի կլինիկո-բակտերիոլոգիական լաբորատորիայում։*

Լեպտոթրիքս միկրոբի մորֆոլոգիայի և բիոլոգիայի հարցերը շատ քիչ էին ուսումնասիրված։ Հեղինակի հետազոտությունը բացահայտում էր լեպտոթրիքսի տարատեսակների գոյությունը, ինչպես նաև դրանց բիո-մորֆոլոգիայի այլ հարցերը։

Հայ բժիշկների կողմից ֆիզիոլոգիայի ասպարեզում կատարված հետազոտություններից «Վրաչ»-ում հրատարակվել են մի շարք հոդվածներ, այդ թվում՝ 1899 թվականին Գ. Ի. Թամամշևի «Կենդանական օրգանիզմում ալկոհոլի անհետացման արագության մասին» աշխատությունը։ Այդ մի հետաքրքրական հետազոտություն է, որը կատարվել է Պետերբուրգում, ակադեմիկոս Ա. Յա. Դանիլևսկու ֆիզիոլոգո-քիմիական լաբորատորիայում և մանրամասն զեկուցվել է ժողովրդական առողջության պահպանության Ռուսական ընկերության սննդի հանձնաժողովում։

Իր վերահիշյալ աշխատության մեջ հեղինակը նպատակ է դրել բացահայտել ալկոհոլի ան-

հետացման արագությունը կենդանական օրգանիզմից և պարզաբանել այն հարցը, թե այդ պրոցեսին օժանդակում է արդյոք «կոլա» բնույթը ներքին օգտագործման դեպքում։ Մի շարք փորձեր են կատարվել 20 ճագարների վրա, որոնց օրգանիզմները հետազոտվել են ալկոհոլի կիրառումից 2-ից մինչև 24 ժամ հետո։

Հեղինակը իր փորձերի արդյունքների հիման վրա հանգում է վերոհիշյալ հարցերի վերաբերյալ հետաքրքրական եզրակացություններին, որոնք որոշակի արժեք են ներկայացնում ֆիզիոլոգիայի այդ բնագավառի համար, մի բնագավառ, որտեղ իր փայլուն հետազոտություններից մեկի՝ «Նյութեր ալկոհոլային հարբեցման ազդեցության ֆիզիոլոգիայի համար» վերնագրով, կատարել էր ռուսական ֆիզիոլոգիայի հայր Ի. Մ. Սեչենովը։

«Վրաչ» հանդեսում 1897 թվականին հրապարակվել է Ն. Զ. Ռումիկովի «Դիազո-ռեակցիան ծծկեր երեխաների մեզի մեջ» խորագրով աշխատությունը, որը հանդիսանում է Պետերբուրգի դաստիարակչական տան բժշկական լաբորատորիայում հեղինակի կատարած աշխատանքի շարադրանքը։

Նշելով, որ էրլիխի կողմից դիազոռեակցիայի հայտնաբերումից հետո այդ ռեակցիայի ստուգման վերաբերյալ կատարված աշխատանքները հիմնականում վերաբերում են մեծահասակ հիվանդներին, հեղինակը նպատակ է դրել ուսումնասիրելու նույն ռեակցիան ծծկեր երեխաների մոտ։ Հեղինակը սկզբում ուսումնասիրել է 147 առողջ, ապա դիֆթերիայով, կարմրուկով և մի շարք այլ հիվանդություններով տառապող երեխաների մեզը։

Իր եզրակացություններում հեղինակը բացահայտում է ծծկեր առողջ երեխաների, ինչպես և մի շարք հիվանդություններով տառապողների մեզի մեջ դիազո-ռեակցիայի առկայությունը կամ բացակայությունը։

Ն. Զ. Ռումիկովի վերոհիշյալ աշխատությունը որոշակի արժեք է ներկայացնում մանկական հիվանդությունների լաբորատոր դիագնոստիկայի համար։

«Վրաչ» հանդեսում տպագրվել են հայ բժիշկների կլինիկական բնույթի մի շարք այլ աշխատություններ։ Այսպես, օրինակ, 1898 թվականին «Վրաչ»-ի երեք համարներում հրապարակվել է Ս. Ս. Նալբանդովի «Սիրինգոմիելիայի (Մորվինի տիպ) սիմպտոմատոլոգիայի մասին» խորագրով աշխատությունը, որի հետ կապված հետազոտությունը կատարվել է պրոֆ. Ա. Յա. Կոժևնիկովի կլինիկայում։ Այստեղ հեղինակը կանգ է առնում ողնուղեղի ծանր տառապանքներից մեկի՝ մորվանյան տիպի սիրինգոմիելիայի սիմպտոմատոլոգիայի վրա։ Ելնելով իր կատարած կլինիկական դիտողություններից և գրականության տվյալներից, նա բացահայտում է այդ հիվանդության դիագնոստիկայի մի շարք հարցեր։ Մի տարի հետո նույն հանդեսում տպագրվել է Ս. Ս. Նալբանդովի մի այլ աշխատություն, նվիրված ներվային մի հազվադեպ տառապանքի նկարագրությանը։

Հայ բժիշկների կլինիկական հետազոտություններից «Վրաչ»-ում հրապարակվել է նաև Ս. Սուրուկյու, «Սիֆիլիսիկ ոչ շաքարային միզահոսության», Ս. Վ. Տեր-Միրզայեանի «Արգանդի արտանկման ժամանակ hysteropexia a abdominalis anterior-ի հարցի շուրջը» և մի շարք այլ աշխատություններ։

«Վրաչ»-ի էջերում հայ բժիշկները հրապարակել են իրենց դիսերտացիաների առանձին հատվածները, ավելի հաճախ՝ այդ դիսերտացիաների համառոտ բովանդակությունը՝ նախնական հաղորդման ձևով։ Այդ նյութերի հրապարակումը նախորդել է դիսերտացիայի պաշտպանության պրոցեսին և հնարավորություն է ընձեռնել դիսերտացիան լայն քննարկման առարկա դարձնել մինչև պաշտպանությունը և պաշտպանության բուն պրոցեսում։

Այսպես, օրինակ, 1893 թ. ապրիլի 22-ին «Վրաչ»-ում հրապարակվել է Լ. Ի. Բերբերովի «Հղիների, ծննդկանների և ստինքով կերակրողների մեզում շաքարի գոյության հարցի շուրջը» խորագրով նախնական հաղորդումը։ Դրանից երկու շաբաթ հետո, Ռազմա-բժշկական ակադեմիայում Լ. Ի. Բերբերովը պաշտպանում է իր գոկտորական դիսերտացիան վերոհիշյալ թեմայով։

«Վրաչ»-ն իր էջերում տեղ է տվել ոչ միայն նշանավոր գիտնականներին, գիտական ու պրակտիկ բժշկության հարցերը լուսաբանողներին, այլ նաև բժշկական գիտության անդաստանում առաջին քայլերը կատարող ուսանողներին, եթե նրանց հետազոտությունները որոշակի արժեք են ներկայացրել։

«Վրաչ»-ում մենք գտնում ենք նաև Ռուսաստանի գիտական բժշկական կենտրոններում իրենց կրթությունն ստացող հայ երիտասարդների ուսանողական գիտական աշխատությունները։

Ռազմա-բժշկական ակադեմիայի ուսանող Ի. Ավթանդիլովը 1889 թվականին «Վրաչ»-ում հրապարակել է «Զոր օդային վաննաների և տաք ըմպելիքի համեմատական քնարեր ներդոր-

ծության մասին» իր ուսումնասիրությունը, որ նա կատարել է պրոֆ. Վ. Ա. Մանասեինի պրոպեդևտիկ թերապիայի կլինիկայում։

Այստեղ հեղինակը իր հետազոտությունների հիման վրա հանգում է այն եզրակացությանը, որ օդային տաք վաննաները, որպես բրոնարեր գործոններ, ավելի էֆեկտիվ են ազդում, քան մորու տաք ըմպելիքը։

«Վրաչ»-ում 1899 թվականին հրապարակվել է նաև Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետի ուսանողներ Ն. Մոսկալենկոյի և Վ. Տեր-Գրիգորյանցի հոդվածը «Alopeciae areatae-ի ծագման հարցի շուրջը» վերնագրով։

Պրոֆ. Ա. Ի. Պոսպելովի առաջարկով, Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետի կողմից «Alopeciae areatae-ն իբրև մաշկի տրոֆոնևրոզ» թեման առաջարկվել էր ուսանողական գիտական աշխատությունների մրցանակարաշխության համար։ Ն. Մոսկալենկոն և Վ. Տեր-Գրիգորյանցը, ի պատասխան այդ առաջարկության, վերոհիշյալ աշխատանքը կատարել էին պրոֆ. Ա. Բ. Ֆոխտի ընդհանուր պաթոլոգիայի ինստիտուտում, բժիշկ Ա. Ի. Տալյանցի ղեկավարությամբ։

«Վրաչ»-ի էջերում ուսանողական գիտական առավել աչքի ընկած հետազոտությունների հրապարակումը պատահական չէ։ Պրոֆ. Վ. Ա. Մանասեինը, շարունակելով Ս. Պ. Բոտկինի տրադիցիաները, իր կլինիկայում լայն հնարավորություններ է ստեղծում ուսանողական գիտական աշխատանքների համար։

«Վրաչ»-ում հայ բժիշկների կլինիկական և էքսպերիմենտալ հետազոտություններից բացի, հրապարակվել են նաև նրանց գիտական համառոտ հաղորդումները պրակտիկայում կատարած դիտողությունները և այլն։

Գ. Թագևոսովը 1894 թվականին «Վրաչ»-ին ուղարկել է «Քթախոտը որպես զկրտոցի նոպան ընդհատող միջոց» վերնագրով մի փոքր հոդված, որը և հրապարակվել է նույն թվականին։

Իրենց պրակտիկ գործունեության ընթացքում կատարած դիտողությունների մասին «Վրաչ»-ի էջերում պատմել են նաև Հայաստանում ծառայած ռուս բժիշկները։ «Վրաչ»-ում 1899 թվականին հրապարակվել է Ալեքսանդրոպոլի տեղական լազարեթի բժիշկ Մ. Ս. Նազարովի «Սկիպիդարի բարերար ազդեցությունը ծանր ծաղկի ընթացքի վրա» վերնագրով հոդվածը։ Այստեղ հեղինակը նկարագրում է սկիպիդարի ազդեցությունը ծանր ծաղկի ժամանակ, որ նա համարում է շատ ավելի արդյունավետ իխտիոլի համեմատությամբ։

«Վրաչ»-ում «Ընթացիկ մամուլից» խորագրի տակ հրապարակվել են ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան բժշկական գրականությունից ռեֆերատներ ու անոտացիաներ։ Դրանց մեջ մենք տեսնում ենք նաև ինչպես հայ բժիշկների, այնպես էլ Հայաստանում ծառայած ռուս բժիշկների բազմաթիվ աշխատությունների ռեֆերատները։

Այսպես, օրինակ, 1898 թվականին «Ընթացիկ մամուլից» վերնագրի տակ տրված է նաև բժիշկ Գ. Ի. Կարագոզյանցի «Վոենno-մեդիցինսկի ժուռնալ»-ում հրապարակված երկու աշխատությունների անոտացիաները։

«Վրաչ»-ում 1894 թվականին հրապարակվել է բժիշկ Վոսկրեսենսկու «Վոենno-մեդիցինսկի ժուռնալ»-ում տպագրված հոդվածի անոտացիան։ Վերոհիշյալ հոդվածը նվիրված է Կարսի մարզի Սարիղամիշ գյուղում զինվորների մեջ նկատված հավկուրության դեպքերին։

Նույն տեղում 1892 թվականին տպագրվել է բժիշկ Խլոդկովսկու, «Կովկասյան բժշկական ընկերության» արձանագրություններում Կարսի մարզում էպիդեմիկ ստոմատիդի դեպքերին նվիրված աշխատության անոտացիան և այլն։

«Ընթացիկ մամուլից» վերնագրի տակ հրապարակվել են նաև հայ բժիշկների պաշտպանած դիսերտացիաների համառոտ անոտացիաները։ Այսպես, օրինակ, 1899 թվականին հրատարակվել է Ա. Մ. Հակոբյանցի «Բոլժոմի եկատերինյան աղբյուրի՝ շշի մեջ լցված դազավորված ջրի քիմիական հետազոտություն» խորագրով դիսերտացիայի համառոտ անոտացիան։

«Ընթացիկ մամուլից» խորագրի տակ հրատարակված նյութերը արժեքավոր են նաև որպես բիբլիոգրաֆիական աղբյուր՝ զանազան վայրերում հայ բժիշկների հրատարակած որոշ աշխատություններ գտնելու համար։ Այսպես, այստեղից մենք տեղեկանում ենք Թամամշևի կողմից Փարիզում գրված և Annales de l'institut Pasteur-ում հրապարակված աշխատության մասին և այլն։

«Վրաչ»-ում «Թղթակցություններ» խորագրի տակ պարբերաբար հաղորդագրություններ են տպագրվել Ռուսաստանի տարբեր բժշկական ընկերությունների գործունեության մասին։ Թեև վերոհիշյալ ընկերությունները մեծ մասամբ ունեցել են իրենց հրատարակությունները, սակայն «Վրաչ»-ում հրապարակված թղթակցությունները որոշակի արժեք են ներկայացնում այն առա-

մով, որ, թեպետ համառոտ կերպով, սակայն մի տեղ են հավաքված այդ ընկերությունների գործունեության վերաբերյալ նյութերը։

Բժշկական ընկերությունների գործունեության վերաբերյալ «Վրաչ»-ում հրատարակված թղթակցությունները հայ բժշկության պատմության համար որոշակի արժեք ու հետաքրքրություն են ներկայացնում այն առումով, որ լույս են սփռում մի շարք հայ բժիշկների գիտական գործունեության վրա։

«Վրաչ»-ի խրոնիկան, գրել է Ա. Լոզինսկին 1911 թվականին, դա ռուսական հասարակական-բժշկական կյանքի կենդանի տարեգրություն է, դա անսպառ և արժեքավոր նյութ է ապագա պատմաբանի համար»։

Իր գոյության ամբողջ ընթացքում «Վրաչ»-ը հանդես է եկել իբրև կանանց բժշկական կրթության ջատագով։ Դա «Վրաչ»-ի հսկայական ծառայություններից մեկն է, որ նա մատուցել է Ռուսաստանում կանանց բժշկական կրթության գործին, մի ծառայություն, որ նա կատարել է մեծ սիրով, հսկայական էներգիայով և համառությամբ։

Բերենք այդ ուղղությամբ այստեղ հրատարակված բազմաթիվ նյութերից մեկը։ 1894 թվականին, Փարիզում բժշկական կրթություն ստացող ռուս 70 ուսանողուհիները «Վրաչ»-ին ուղղած իրենց նամակում գրում էին։

«...Կենդանի հետաքրքրությամբ հետևելով Ռուսաստանում կանանց բժշկական դասընթացների բացմանը վերաբերող հարցին, մենք առանձնահատուկ գոհունակությամբ կարդացինք «Ռուսկիե վեդոմոստի»-ի 4-րդ համարում ռուս բժիշկների համագումարի որոշումը՝ այդ դասընթացները կարճ ժամանակում բացելու, ինչպես նաև արտասահմանյան որևէ համալսարանում դասընթացն ավարտած կին բժիշկներին քննության թույլատրելու միջնորդության մասին։

Մենք հավատում ենք այն գործի հաջողությանը, որը հանդիսանում է զարգացման այն հիմնարկի կողմից, որը արժանավորապես վայելում է հասարակության հարգանքն ու պատիվը, և խնդրում ենք ռուս բժիշկների համագումարի պ. պ. անդամներից ընդունելու մեր խորը հարգանքն ու երախտագիտությունը մեզ բոլորիս համար թանկագին գործում նրանց ցուցաբերած աշխույժ մասնակցության համար։

Փարիզ, 23 I, 4/II, 1894 թ.»[1]։

Մինչև 1897 թվականը, այսինքն մինչև կանանց բժշկական ինստիտուտի բացվելը, մի շարք տարիներ շարունակ Ռուսաստանում կանայք զրկված էին բարձրագույն բժշկական կրթություն ստանալու հնարավորությունից։

Վերոհիշյալ նամակն ստորագրել էր նաև Ս. Թարխանովան։ Հետագայում, 1900 թվականին, «Վրաչ»-ը հաղորդել է նաև այն մասին, որ Թարխանյանցը Փարիզում դոկտորական դիսերտացիա է պաշտպանել «Դեժգույն ստկավարյունության ժամանակ լյարդի փոփոխությունների հարցի շուրջը» թեմայով։ Դրանից հետո նա, վերադառնալով իր հայրենի Կովկասը, ապնիվ կերպով ծառայել է ժողովրդի առողջապահությանը։

Իր գոյության ամբողջ ընթացքում «Վրաչ»-ը սկզբունքային պայքար է մղել հոմեոպաթների դեմ։ Այդ ուղղությամբ այստեղ տպագրված բազմաթիվ նյութերից ուշադրության արժանի է Կովկասյան բժշկական ընկերությունից հոմեոպաթ Ա. Ի. Զեմանի վտարման գործը։ Վերջինս այդ ընկերության իսկական անդամ ընտրվելուց մեկ տարի հետո իրեն հայտարարում է հոմեոպաթ։ Կովկասյան բժշկական ընկերության անդամները անհամատեղելի են համարում ընկերության անդամ լինելը հոմեոպաթի կոչման հետ։ Այդ ուղղությամբ վերոհիշյալ ընկերության նիստում ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցում են նաև հայազգի բժիշկներ Մ. Զ. Ավետիսովը և Ս. Ա. Մայսուրյանցը։

Առանձնահատուկ ուշադրությամբ «Վրաչ»-ը արձագանքել է Կովկասյան բժշկական ընկերության գործունեությանը։

1889 թվականին «Վրաչ»-ը Կովկասյան բժշկական ընկերությունը համարում է ամենագործունեա Ռուսաստանի բժշկական ընկերություններից և համոզմունք է հայտնում, որ նրա 25-ամյակը ջերմ արձագանք կգտնի Ռուսաստանի բոլոր բժիշկների կողմից։

Կովկասյան բժշկական ընկերության գործունեությունը բարձր գնահատելով հանդերձ՝ «Վրաչ»-ը կշտամբում է նրան այն բանի համար, որ ընկերության պատվավոր անդամներ են ընտրվում նաև ոչ պաշտոնների, ակնհայտ կերպով ակնարկելով վարչական ու կրոնական մի շարք դեկավար անձանց պատվավոր անդամ ընտրելու փաստը։

Շատ հաճախ «Վրաչ»-ը անդրադառնում է Կովկասյան բժշկական ընկերության քննարկած

[1] „Врач" № 6, 1894, стр. 191.

հարցերին, հավանություն է տալիս գրանց, աջակցում և պաշտպանում խելացի ու առաջավոր գործը, հանդիմանում սխալների ու թերությունների համար[1]։

1893 թվականին «Վրաչ»-ը, արձանագրելով «Կովկասյան բժշկական ընկերության կից կովկասյան բժիշկների՝ խոլերայի համաճարակի դեմ պայքարի միջոցառումների քննարկման ու մշակման համար առաջին համագումարի օրագրի» լույս ընծայումը, իր մի քանի դիտողություններն էր անում այդ որոշումների կապակցությամբ։ «Վրաչ»-ը լրիվ հիմնավորված է համարում այդ համագումարի որոշումն այն մասին, որ խոլերայից բուժելու ձև պետք է ընտրի ամեն մի բուժող բժիշկը և այլն։

«Վրաչ»-ը ուշադրություն է դարձրել նաև Հայաստանում առողջապահական գործի վիճակի վրա։

Դեռևս 1882 թվականին «Վրաչ»-ը բերում է մի շարք տեղեկություններ, որպես ակնհայտ փաստեր Կովկասում բժշկության բարձիթող վիճակի վերաբերյալ։ «...Երևանի նահանգում,— ասված է այստեղ,— կա 8 բժիշկ, 14 բուժակ և 4 ատամայր, այնպես որ ամեն մի բժիշկին ընկնում է 68.000 բնակիչ, իսկ ամեն մի ատամորը 58.000 կին։ Դրա հետ մեկտեղ, դավառական բժիշկները խեղդված են դիահերձումներով, վիրավորների դատական զննումներով և այլն։ Դրա հետևանքով բուն ժողովրդական առողջապահությանը մնում է զրո կամ համարյա զրո»[2]։

«Վրաչ»-ը գրել է նաև Կարսի մարզում առողջապահական ծանր վիճակի, բժիշկների անբավարար թվի, հոսպիտալի անմխիթար դրության մասին։

Այնպիսի փաստեր, ինչպես են նախկին Երևանյան նահանգում լեպրոզորիա բացելու հարցը, տեղեկություններ 1892—93 թթ. Երևանում խոլերայի տարածման ընթացքի մասին և այլն, իրենց արտացոլումն են գտել «Վրաչ»-ում։

«Վրաչ»-ը շեշտել է այն ծանր պայմանները, որոնց մեջ իրենց գործունեությունն են ծավալել Կովկասի բժիշկները, այն անհամար դժվարությունները, որ հաղթահարել են նրանք։

«Վրաչ»-ը մեծ գովեստով է խոսել Կովկասում ծառայող ռուս բժիշկների գործունեության մասին և կրքոտ կերպով պաշտպանել է այդ բժիշկների պատիվը գրպարտիչների պրովակացիայից։ 1892 թվականին ընդհանուր մամուլում լուրեր տպագրվեց Կովկասյան բժիշկների մասին, գրպարտչական բնույթի տեղեկություններ, որ իբր թե այդ բժիշկները հրաժարվել են օգնություն ցույց տալ խոլերայով հիվանդներին և, խոլերայից սարսափած, փախել են։

Սկզբից ևեթ «Վրաչ»-ը չհավատար այդ լուրերին, որոնք ինչպես հետագայում պարզվեց, ամբողջովին գրպարտչական բնույթ ունեին։ Հենց սկզբից, «Վրաչ»-ը գրեց. «Ռուս բժիշկները միշտ կարողացել են կատարել իրենց պարտքը, կարողացել են մեռնել իրենց պոստերում պատերազմի ժամանակ, և բոլորի աչքի առջև մեռնում էին և մեռնում են քաղցող վայրերում բծավոր տիֆի դեմ պայքարում»[3]։

Բազմաթիվ ու բազմապան այլ հարցեր է առաջ քաշել «Վրաչ»-ը, մեծ թե «մանր», բայց իր ժամանակի համար ակտուալ, կարևոր հարցեր։ Ահա մի օրինակ. «Վրաչ»-ը բազմիցս առաջ է քաշել այն միտքը, որ հանգուցյալ բժիշկի դրադարանը պետք է անցնի որևէ հասարակական կազմակերպության, որպեսզի այդ գրքերը ոչ թե ցիրուցան լինեն, այլ օգտագործվեն հնարավորին չափ ավելի շատ բժիշկների կողմից։ Երբ 1899 թվականին հանգուցյալ հայ բժիշկ Հախվերդովի ազգիկր ցանկություն հայտնեց հոր գրադարանը Կովկասյան բժշկական ընկերությանը հանձնելու, «Վրաչ»-ը ջերմորեն ընդունեց այդ լուրը և այդ մասին հայտնեց իր «Խրոնիկալում»։

Ինչպիսի կրքոտությամբ որ «Վրաչ»-ը գովում էր հայ բժիշկների լավ գործերը, նույնպիսի կրքոտությամբ խարազանում էր նրանց վատ արարքները։

Իր գոյության ամբողջ ընթացքում «Վրաչ»-ը պայքարել է բժշկության ասպարեզում եղած ամեն տեսակի շառլատանության, մասնավորապես ինքնակոչ բժիշկների, «գաղտնի» միջոցների դեմ։ «Վրաչ»-ի էջերում մերկացվել են բազմաթիվ շառլատան ինքնակոչ-բժիշկներ, այդ թվում Դ. Լ. Հարությունյանցը, որը 1898 թվականին Ասորախանում զբաղվել է «բժշկությամբ», Ա. Ավետիսովը, որը 1895 թվականին Թիֆլիսում ուժեղ ազդող միջոցներով «բուժել է» սիֆիլիսը և այլն։

Հանուն բժշկական էտիկայի անաղարտության, ընդդեմ ամեն տեսակի անազնվության ու շառլատանության, իր պայքարը «Վրաչ»-ը մղել է ոչ թե դեպքից դեպք, լոկ խոսքերով, այլ հետևողականորեն, կոնկրետ փաստերով։

---

[1] Вр[illegible], № 4, 1885 стр. [illegible]3

[2] „Вр[illegible]“, № 17, 18[illegible], стр. 284.

[3] „Вр[illegible]“, № 26, 1892, стр. 165.

Սակայն «Վրաչ»-ի փառքի դափնե պսակը հասարակական առողջապահության բնագավառի նրա գործունեությունն է և այստեղ լավագույն օրինակներից մեկը վերաբերում է հայազգի բժիշկ Մ. Ի. Առուստամովին։

Վերն արդեն ասվեց, որ «Վրաչ»-ը տպագրել է Մ. Ի. Առուստամովի գիտական հոդվածները և նյութեր՝ նրա նշանավոր հայտնագործությունը մրցանակի արժանացնելու վերաբերյալ։

«Վրաչ»-ը հայազգի բժիշկներից ամենից շատ Մ. Ի. Առուստամովի գործունեությանն է անդրադարձել։ Եվ այդ պատահական չէ։

Մ. Ի. Առուստամովը ռուսական առաջավոր հասարակական բժշկության նշանավոր դեմքերից էր։

«Վրաչ»-ը ժողովրդական առողջապահության պայքարի առաջադեմ ուժերի հզոր օրգանն էր։ Նա չէր կարող անտեսել, չէր կարող չաջակցել այդ ասպարեզի մարտնչող գործիչ Մ. Ի. Առուստամովին։

«Վրաչ»-ի «Խրոնիկա և մանր լուրեր» բաժինը պարունակում է նաև շատ տարբեր բնույթի տեղեկություններ հայ բժիշկների գործունեության վերաբերյալ։

«Վրաչ»-ի վերոհիշյալ բաժնում սիստեմատիկաբար տեղեկություններ են հրապարակվել Ռուսաստանում բժշկականության դոկտորի աստիճանի համար դիսերտացիա պատրաստած բժիշկների մասին։ Այստեղ մենք գտնում ենք մի քանի տասնյակ հայ բժիշկների անուններ։ Այդ շրջանում (1880—1901 թթ.) Պետերբուրգի Ռազմա-բժշկական ակադեմիայում և Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետում դոկտորական դիսերտացիաներ են պաշտպանել հայազգի բժիշկներ Ա. Մ. Հակոբյանցը, Ս. Ս. Իստամանովը, Մ. Զ. Ավթանդիլովը, Ա. Բաբաևը Վ. Ի. Վարդանովը, Գ. Բ. Մելիք-Բեգլյարովը, Լ. Ի. Բերբերովը, Ն. Դ. Զարգարովը և ուրիշներ։

Մի շարք այլ բնույթի լուրեր բացահայտում են Ռուսաստանի տարբեր մասերում հայ բժիշկների անձնվեր աշխատանքի արժանի գնահատության փաստերը։

«Վրաչ»-ի «Խրոնիկայից» մենք տեղեկանում ենք, թե ինչպիսի ջերմ հրաժեշտով է ավարտվել բժիշկ Գ. Ա. Թադևոսովի երկարամյա ծառայությունը զորամասերից մեկում, ինչպես զգլաբեցիները սիրով նշել են բժիշկ Ա. Ի. Սուլթան-Շահի գործունեության 25-ամյակը, Պյատիգորսկի տեղական լազարեթի բժիշկները՝ Հ. Բ. Կալուստովի ռազմա-բժշկական ծառայության 25-ամյակը։

Ամփոփելով «Վրաչ»-ի մասին վերևում ասվածը, գալիս ենք այն եզրակացությանը, որ այդ հանդեսը իր ժամանակին հսկայական դրական դեր է խաղացել նաև հայ բժիշկների կյանքում, մասնավորապես նրանց դաստիարակության գործում։ Այսօր «Վրաչ»-ը հանդիսանում է հայ բժշկության անցյալ դարի 80-ական և 90-ական թվականների պատմության ամենահարուստ սկզբնաղբյուրներից մեկը։

Ստացվել է 21, XII—1957 թ.

А. А. ЛАЛАЯН

ЖУРНАЛ „ВРАЧ“ И АРМЯНЕ-ВРАЧИ И МЕДИЦИНА В АРМЕНИИ

Резюме

1. На страницах журнала „Врач“ печатались и работы армян-врачей.

2. „Врач“ отражал и откликался также на значительные события медицинской жизни Кавказа.

3. Отдел „Хроника“ содержит сведения о деятельности армян-врачей.

4. В свое время журнал сыграл огромную роль в жизни армян-врачей, в частности в деле их воспитания.

5. „Врач“ является одним из богатых первоисточников истории медицины в Армении 80-х и 90-х годов прошлого столетия.